Արա Հարությունյանի արվեստը առաջին հերթին օրգանական, անխաթար միասնականություն է իրենից ներկայացնում: Նա պատկանում է այն վարպետների թվին, ով որոշում է գեղարվեստական որոնումների ուղղությունը:[1]

Վլադիմիր Ցելտներ

ՍԱՀՄԱՆԵԼՈՎ ՄՈՆՈՒՄԵՆՏԱԼԸ

Արմեն Եսայանց
Արվեստագիտության թեկնածու
Ցուցադրությունների գծով տնօրեն
Գաֆէսճեան արվեստի կենտրոն

Արա Հարությունյանը (1928-1999) խորհրդային ժամանակաշրջանի հայ ամենաականավոր մոնումենտալ քանդակագործներից էր: Նրա կոթողային ստեղծագործություններն սփռված են հետխորհրդային բազմաթիվ հանրապետություններում, ինչպես նաև այդ սահմաններից դուրս: Արա Հարությունյանի գեղարվեստական ժառանգությունը բազմաշերտ է. մոնումենտալ և մոնումենտալ-դեկորատիվ ստեղծագործություններ, դիմաքանդակներ, շիրմաքարեր, բազմաթիվ գծանկարներ և գրաֆիկական աշխատանքներ: Նա է հանդիսանում Երևանի բարձունքում խոյացող «Մայր Հայաստան»-ի հեղինակը, որն այսօր դարձել է Հայաստանի ամենագլխավոր խորհրդանիշերից մեկը (1967, էջ 85):

Արա Հարությունյանն իսկական մոնումենտալիստ է այս բառի ամենալայն իմաստով: Մոնումենտալ արվեստը ենթադրում է այնպիսի ստեղծագործություն, որը մեծածավալ լինելով հանդերձ, որոշակի կապի մեջ է գտնվում ճարտարապետության կամ բնական լանդշաֆտի հետ՝ կոմպոզիցիոն միասնականություն ստանալով և կազմելով մի ամբողջականություն: Սակայն «մոնումենտալ»-ը նշանակության տարբեր շերտեր ունի՝ փիլիսոփայական, գեղագիտական, մշակութային, լեզվաբանական: Այս համատեքստում հարկ է նշել, որ երբեմն մեծածավալ ստեղծագործությունները մոնումենտալ չեն իրենց կառուցվածքով, ոգով կամ հնչեղությամբ, և միևնույն ժամանակ փոքր ծավալի ստեղծագործությունը, չհանդիսանալով մոնումենտալ արվեստի նմուշ, կարող է որոշակի կոթողայնություն կրել իր մեջ:

Գաֆէսճեան արվեստի կենտրոնի «Արա Հարությունյան. Մոնումենտալ երևակայում» ցուցադրությունը, նվիրված լինելով արվեստագետի ծննդյան 90-ամյակին, այդուհանդերձ հետահայաց լինելու միտում չունի: Աշխատանքներ են ներկայացված տարբեր շրջափուլերից՝ բացահայտելով վարպետի հարուստ գեղարվեստական լեզուն և կենտրոնական դերը հայկական քանդակագործության էջերում, սակայն գլխավոր խնդիրը, որ դրված է մեր առջև արվեստի «մոնումենտալ» լինելու բանալին գտնելու մեջ է:

Ըստ Արա Հարությունյանի, իր ապագա ճանապարհը կանխորոշված էր դեռ մանկուց: Երեք տարեկան հասակից նկարել է շրջապատող գրեթե ամեն ինչ, իսկ հինգ-վեց տարեկան հասակում Նորագավիթ գյուղում՝ բարեկամի բակում, մի հետաքրքիր քար է գտել. «Զարմանալիորեն ձգեց ինձ այդ քարը: Շատ չարչարվեցի ու այդ քարից ստեղծեցի Անահիտ աստվածուհու դիմաքանդակը՝ մեր հարևանի աղջկա՝ Անահիտի նմանությամբ: Երևի այդ օրվանից քանդակագործ դառնալու դեռևս տարտամ երազանքն առաջացավ հոգում»[2]: Հետաքրքրական է, որ Անահիտի կերպարը հետագայում ևս գրավել է վարպետին, ինչի վառ վկայությունը ցուցադրությանը ներկայացված «Անահիտ» պղնձաձույլ աշխատանքն է (1974, էջ 39), որի տուֆակերտ օրինակը է գտնվում է Քիշնևում:

1950-ական թվականները արվեստագետի կայացման և լայն ճանաչման տարիներն էին, երբ նրա դիպլոմային աշխատանքը՝ Կոմիտասի մահարձանը, կանգնեցվեց Կոմիտասի անվան զբո-

1 Վլադիմիր Ցելտներ, «Արա Հարությունյանի արվեստի աշխարհը», «Իսկուսստվո» ամսագիր, N12, 1983 (ռուսերեն)
2 Ղարիբ Հայրապետյան, «Արվեստի ճշմարտությունը հավերժական է», «Երեկոյան Երևան» թերթ, N163, 1977

Մայր Հայաստան (էսքիզ) | 1960
Mother Armenia (sketch)

Վաղ գարուն | 1980
Early Spring

Գ. Սունդուկյանի անվան
ազգային ակադեմիական թատրոն | 1966
National Academic Theater of Armenia
after G. Sundukyan